# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

N 252 – Ա 22 հունիսի 2020թ.

## «ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշման 7-րդ կետը

որոշում եմ՝

1. Հաստատել 2020 թվականի հունիսի 23-ին, ժամը $11^{00}$-ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Գավառի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցույթային հանձնաժողովի կազմը՝ Զոհրաբյան Արմեն (մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ), Վարդանյան Լուսինե (մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար), Ղուկասյան Վերգինե (մարզպետարանի քարտուղարության պետ), Սարգսյան Նելսոն (մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ), Մնացականյան Վարդանուշ (մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ), Պետրոսյան Մարտին (մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ), Խաչատրյան Գևորգ (մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ):

2. Մրցույթային հանձնաժողովի նախագահ նշանակել Արմեն Զոհրաբյանին, քարտուղար՝ Վարդանուշ Մնացականյանին:

3. Մրցույթային հանձնաժողովի աշխատանքներին որպես դիտորդ կմասնակցի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի գլխավոր իրավաբան Մարիամ Հակոբյանը:

4. Հանձնաժողովի լիազորությունները համարվում են դադարեցված մրցույթի ավարտից հետո:

22.06.2020

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Подписано: SANOSYAN GNEL 1710830069

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ